

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄՍԿԱՐԳԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԱԳՐԵՄԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

**Միմոնյան Գուրգեն**

*Քաղաքական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

*«Նա ով պայքարում է հրեշի դեմ, պետք է  
զգուշանա, որ պայքարի ընթացքում  
ինքը չվերածվի հրեշի: Քանզի եթե դու  
երկարատև նայես վիհին, վիհը կնայի քեզ»<sup>1</sup>:  
**Ֆրիդրիխ Նիցշե (1844-1900)***

2020 թվականի սեպտեմբերի 27<sup>2</sup>-ին Արցախի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի և նրա դաշնակիցների կողմից սանձազերծված պատերազմով սկիզբ դրվեց բռնապետությունների գլոբալ ագրեսիային ժողովրդավարությունների նկատմամբ: 44 օր տևած լայնածավալ ռազմական ագրեսիայի հետևանքով գոյութենական վտանգ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության համար, որը հաստատվել էր 2018-ի «Թավշյա» հեղափոխության վերջնադրույունքում: 44-օրյա պատերազմը կարելի է պայմանական սկիզբը համարել, որից մեկնարկեց ժողովրդավարությունների<sup>3</sup> նկատմամբ բռնապետությունների<sup>4</sup> կողմից պատերազմների սանձազերծման գլոբալ «շքերթը»: Դրան հաջորդեցին 2021-ի հունվարին Ղազախստանում տեղի ունեցած հակակառավարական բողոքի զանգվածային ակցիաները և 2022-ի փե-

<sup>1</sup> Nietzsche F. Beyond good and evil. Edited by Horstmann Rolf-Peter (Humboldt-Universität, Berlin), Norman Judith (Trinity University, Texas), translated by Norman Judith. New York: Cambridge University Press, 2002, p. 69.

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին օրենքում լրացում կատարելու մասին Պ-084-08.11.2021-ՊԲ-011/0 (13.09.2023) <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=64171>

<sup>3</sup> Freedom House, Armenia, Nations in transit 2023, (13.09.2023) <https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023>

<sup>4</sup> Freedom House, Azerbaijan, Freedom in the world 2023, (13.09.2023) <https://freedomhouse.org/country/azerbaijan/freedom-world/2023>

տրվարի 24-ին Ռուսաստանի Դաշնության ռազմական ներխուժումը Ուկրաինա: Եթե ղազախստանյան իրադարձությունների ժամանակ Ղազախստանի իշխանությունների դիմումի համաձայն ՀԱՊԿ միջամտությամբ հնարավոր դարձավ կասեցնել համազգային ապստամբությունը<sup>5</sup>, ապա Ուկրաինայի դեպքում ամեն ինչ ընթացավ այլ ճանապարհով:

Ուկրաինայի դեմ սանձազերծված պատերազմով Միջազգային հանրությունը փաստեց, որ Վլադիմիր Պուտինի հարձակումը, որն արդեն միլիոնավոր մարդկանց տեղահանությունների և հարյուր հազարավոր զոհերի պատճառ է դարձել, ոչ միայն գոյութենական վտանգ է ներկայացնում Ուկրաինայի ինքնիշխանության համար, այլև վտանգ է «համաշխարհային ազատական կարգը»<sup>6</sup>:

Վերոնշյալ գլոբալ իրադարձություններով պայմանավորված «ժողովրդավարական աշխարհի» առաջամարտիկը համարվող ԱՄՆ 2022-ի հոկտեմբերին հրապարակեց իր նոր ազգային անվտանգության ռազմավարությունը, համաձայն որի բռնատիրական կարգերով առաջնորդվող պետություններից բխող ռիսկերը համարվեցին գերակա. «մեր տեսանկյունից ամենասուր ռազմավարական խնդիրը բխում է այն տերություններից, որոնցում հաստատված է բռնապետական կարգեր, հափշտապողական արտաքին քաղաքականությամբ, հենց այդպիսիների պահվածքն է վտանգ ներկայացնում միջազգային խաղաղությանը և կայունությանը, հատկապես մղելով ագրեսիվ պատերազմներ կամ պատրաստվելով դրանց, ակտիվորեն խաթարելով այլ երկրներում ժողովրդավարական քաղաքական գործընթացները»<sup>7</sup>: Վերոգրյալ փաստաթղթով հստակ շեշտադրվում է ՌԴ և Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը: Այդ ռազմավարությամբ պայմանավորված Հյուսիսատլանտյան դաշինքը լայնածավալ ռազմաքաղաքական միջամտություններ և օժանդակություններ է իրականացնում աշխարհի տարբեր անկյուններում ժողովրդավարությունները պաշտպանելու համար:

---

<sup>5</sup> Carnegie endowment for international peace, Нур-Султан без Назарбаева. О причинах и последствиях кризиса в Казахстане, Александр Габуев, Темур Умаров (07.01.2022). (13.09.2023) <https://carnegiemoscow.org/commentary/86147>

<sup>6</sup>Freedom House, Nations in Transit 2022, From Democratic Decline to Authoritarian Aggression, Mike Smeltzer Noah Buyon (14.09.2023) <https://freedomhouse.org/report/nations-transit/2022/from-democratic-decline-to-authoritarian-aggression>

<sup>7</sup> National Security Strategy, Biden-Harris Administration's National Security Strategy, October 2022 (14.09.2023) <https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/10/Biden-Harris-Administrations-National-Security-Strategy-10.2022.pdf>

Ուստի արտաքին ագրեսիայի պայմաններում ժողովրդավարական արժեհամակարգի պաշտպանության **համար առաջին** (այս և հաջորդ ընդգծումները հեղինակին են) հիմնախնդիրը **դաշնակիցների որոնումն է միջազգային ասպարեզում:**

Գերակա ուժի ռազմական մեքենայի բախմանը հաջորդող իրադարձությունների մոդելավորմամբ հնարավոր է հայտնաբերել ժողովրդավարական արժեհամակարգի պաշտպանության **համար երկրորդ** հիմնախնդիրը:

Մոդելավորմամբ ենթադրենք, որ պետության խուսանավման քաղաքականությունը արդյունք չի տալիս և գերակա ուժը իրականացնում է ռազմական գրոհ, զուգամիտված ահաբեկչական և հեղափոխական օպերացիաներով երկրի ներսում, այս իրավիճակում առաջանում են չափազանց մեծ ռիսկեր, որ պետության ներսում կարող է տեղի ունենալ իշխանության բռնազավթում կամ անիշխանություն, և իբրև պատճառահետևանքային կապ՝ ինքնիշխանության կորուստ և քառս: Այսպիսի իրողությունների զարգացման ռիսկեր ունեցող ժողովրդավարություններում պետական աստիճանակարգի, համակարգերի և դրանց միջև ներառականության կառուցմանը և զարգացմանը զուգընթաց պետք է խթանվեն քաղաքացիական հասարակության ինքնակազմակերպման ոչ պետական, հանրային հնարավորությունների զարգացումը: Դրա մաս է հանդիսանում կոնտրիշխանության կայացումը. «իշխանությունը բխում է մեծամասամբ համակարգերից, իսկ կոնտրիշխանությունը՝ քաղաքացիական հասարակությունից»<sup>8</sup>:

Այսինքն, հանրային իշխանության ուղղահայաց աստիճանակարգին զուգահեռ անհրաժեշտ է զարգացնել նաև «հորիզոնական հեղինակությունների ինստիտուտը» իր ֆորմալ և ոչ ֆորմալ, անհատական և կոլեկտիվ ընկալումներով հանդերձ: Այդպիսիք կարող են լինել ազգային ավանդական ինստիտուտները, օրինակ՝ ընտանիքը, եկեղեցին, կամ հեղինակավոր անձիք՝ մտավորականները, «հերոսը» իր համազգային ընկալմամբ, ինչպես նաև գաղափարական կամ ընկերակցային միությունները և այլն:

Ամփոփելով ընդգծենք, որ ի թիվս բազմաթիվ այլ հիմնախնդիրների, առանցքային և հրատապ լուծելու ենթակա են հետևյալ երկու հիմնախնդիրները

<sup>8</sup> **Кастельс М.** Власть коммуникации. Учеб пособие. Пер. с англ Тылевич Н.М., пер. с англ. предисл. к изд. 2013 г. Архиповой А.А., под. науч. ред. Черных А.И. Нап. исслед. ун-т «Высшая школа экономики». 2-е изд., доп. М.: Изд. дом Высшей школы экономики, 2017, с. 14.

1. **դաշինքների ձևավորումը**, որն իրենից ենթադրում է անվտանգային կառույց, դիվանագիտական, տնտեսական, տեխնոլոգիական, տեղեկատվական, ինստիտուցիոնալ և ռազմական օժանդակության հնարավորությամբ,
2. **հորիզոնական համախմբում**, որը կոնտրընտրանու և հեղինակության սուբյեկտների շուրջ հանրային համախմբման բարձր մակարդակ է դրսևորում կազմակերպված դիմադրություն ցուցաբերելու և ուղիղ ժողովրդավարությունը կենսունակ պահելու համար, մինչև հնարավոր կլինի այն համակարգայնացնել, վերածելով ներկայացուցչական ժողովրդավարության:

Մեր օրերում առավել քան երբեք կրթությունն ու հմտություններն յուրացումը ձեռք են բերել շարունակական բնույթ, ինչի շնորհիվ անհատը սոցիալականացվելու հնարավորություն ունի ոչ միայն ուղղահայաց, այլև հորիզոնական շարժնթացով: Սա դարաշրջան է, երբ յուրաքանչյուր անհատ՝ արդյունավետ օգտագործելով սեփական մտավոր հնարավորությունները, միջոցներն ու կապերը, իզոբոս է ստեղծելու «ինքնավար» տնտեսություն. սահմանափակ ջանքերի շնորհիվ մշակելու ընդարձակ տարածություններ, արտադրելու մասնավոր մտահղացումներ և ստեղծելու հանրային բարիք:

Պետության գենեզիսի տեսությունները պատասխանում էին «Ի՞նչ», «Ինչու՞» և «Ինչպե՞ս» հարցերին: Այսօր ժամանակակից քաղաքագիտությունը այդ հարցերին ավելացրել է նաև «Հանուն ինչի՞» հարցը: Եթե նախկինում, պատասխանելով «ի՞նչ» հարցին, բավարար էր սահմանել պետության տիպը, որը անհրաժեշտ է այս կամ այն գոյութենական հիմնախնդիրները լուծելու համար («ինչո՞ւ» հարցի պատասխանն է) ու պետք է ունենա այս կամ այն կառուցվածքակազմակերպական տեսքը («ինչպե՞ս»), ապա այսօր շատ կարևոր է նաև պատասխանել, թե ո՞րն է այն արժեքը որին պետք է ծառայի այդ պետությունը («հանուն ինչի՞»): Այդ հիմնահարցը իր մեջ պարունակում է, ոչ միայն պետականակերտ քաղաքակրթության արժեքաբանական հիմքը, այլև ապագայում գտնվող այն հեռավոր ափը, դեպի ուր կուրս է վերցրել պետության նավը:

Պետականաշինությունը անհատի կենսասոցիալական և քաղաքակրթական տիպին բնորոշ վարքատիպ է, քանի որ այն զարգացած բանականության կողմից ինքնապաշտպանության բնագործ բավարարելուն միտված ռացիոնալ և համակարգված գործողությունների շղթա է: Դրանով է պայմանավորված, որ քաղաքակրթական արժեհամակար-

գով տիտղոսակիր ազգը՝ կատարելով անցում և համախմբվելով, դիմում է անգամ մեծ զոհողությունների և պայքարում է ընդդեմ գերակայող ուժի սանձազերծած ագրեսիայի հանուն իր լինելիության իրավունքը իրացնելու:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ոչ մի պետություն չի ապրում բացառապես ներկայով: Անգամ այժմյան զարգացած երկրների բարեկեցիկ ներկան եղել է այդ երկրների մի ինչ-որ հեռավոր և ոչ այնքան հեռու անցյալի ռազմավարությունը, որին հասել են մարտավարական լուծումների հաջողականության միջոցով, շարունակաբար պայքար մղելով իրենց տեսակին, քաղաքական և իրավական կարգերին, ինչպես նաև քաղաքական մշակույթին սպառնացող արտաքին և ներքին մարտահրավերների դեմ: Ռազմավարական ապագայի կառուցակարգմամբ պետությունը իրացնում է իր թերևս ամենաառանցքային գործառույթը՝ տիտղոսակիր ազգին ապագա տեղափոխելու և այդ կերպ ազգային ինքնությունը և ինքնիշխանությունը հարատև դարձնելու քաղաքականությունը: Վերոնշյալ քաղաքականությունը կիրառելու համար պետությունն իր ռազմավարությունը ներդաշնակում է երկու՝ բնականոն (խաղաղության) և ճգնաժամային (պատերազմի), իրողություններին համահունչ:

**Բանալի բառեր.** Ժողովրդավարություն, համախմբում, ցանցային պետություն, ենթակառուցվածքներ, քաղաքական մշակույթ:

## ПРОБЛЕМА ОБОРОНЫ ДЕМОКРАТИЧЕСКИХ ЦЕННОСТЕЙ В УСЛОВИЯХ ВНЕШНЕЙ АГРЕССИИ

*Симомян Гурген*

*Кандидат политических наук  
старший научный сотрудник Института  
философии, социологии и права НАН РА*

## РЕЗЮМЕ

Ни одно государство мира не существует исключительно ради сегодняшнего дня. Даже благополучное настоящее современных развитых стран является олицетворением стратегии давнего и недавнего прошло-

го, достижение которого стало возможным с помощью последовательности тактических решений, непрерывно сражаясь против внешних и внутренних вызовов, грозящих их идентичности, политическому и правовому строю, так же, как и их политической культуре. Построением стратегического будущего, государство имплементирует своё, возможно самую основную функцию: обеспечение перехода титульной нации в будущее параллельно обеспечивая непрерывность национальной идентичности и суверенитета. Для имплементации вышеуказанной политики государство адаптирует свою стратегию в соответствии с двумя реалиями – естественными (мирными) и кризисными (военными).

**Ключевые слова:** Демократия, консолидация, сетевое государство, коммуникации, политическая культура.

## THE PROBLEM OF DEFENSE OF DEMOCRATIC VALUES IN CONDITIONS OF EXTERNAL AGGRESSION

*Simonyan Gurgen*

*PhD in Political Science*

*Senior Researcher of the Institute of  
Philosophy, Sociology and Law of NAS RA*

### SUMMARY

No state in the world exists solely for the sake of today. Even the prosperous present of the modern developed countries is the embodiment of the strategy of the distant and recent past, the achievement of which was made possible through a sequence of tactical decisions, continuously fighting against external and internal challenges that threaten their identity, political and legal system, as well as their political culture. By building a strategic future, the state implements its, perhaps, most basic function: ensuring the transition of the titular nation into the future while simultaneously ensuring the continuity of national identity and sovereignty. To implement the above policies, the state adapts its strategy in accordance with two realities - natural (peace) and crisis (war).

**Keywords:** Democracy, Consolidation, Network State, Communications, Political Culture.